

Էրազմուս+ տեղեկատվական օր Վանաձորում

Վանաձորի պետական համալսարան, Տիգրան Մեծի 36, ք. Վանաձոր

Ս.թ. դեկտեմբերի 2-ին տեղի կունենա Էրազմուս+ ծրագրի Տեղեկատվական օր Վանաձորի պետական համալսարանում: Տեղեկատվական օրը միտված է Հայաստանի և Եվրամիության միջև բարձրագույն կրթության ոլորտում հասանելի դրամաշնորհային հնարավորությունների ներկայացմանը:

Հանդիպման ընթացքում կհրապարակվեն Էրազմուս+ ծրագրի նորությունները, որոնք արտացոլված են 2022թ. Էրազմուս+ առաջարկների ներկայացման մրցույթում (Erasmus+ Call for Proposals 2022):

Էրազմուս+-ը ԵՄ ծրագիր է, որի հիմնական թիրախային ուղղությունները կարողությունների զարգացմանը միտված նախագծերն ու փոխանակումներն են կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի ոլորտներում:

2021-2027թթ. ընթացքում Էրազմուս+-ը շարունակելու է իրականացնել ծրագրեր՝ շեշտադրելով երեք հորիզոնական առաջնահերթություններ՝ ներառականություն և բազմազանություն, թվային տրանսֆորմացիա, շրջակա միջավայրի կայունություն:



ՕՐԱԿԱՐԳ



13:00-13:40

Էրազմուս+ ծրագրի 2021-2027թթ. շրջափուլի նորությունները. 2022թ. առաջարկների ներկայացման մրցույթի մանրամասները

Հարց ու պատասխան

Լանա ԿԱՌԼՈՎԱ, Էրազմուս+ ազգային գրասենյակի Համակարգող

13:40- 14:40

Կարողությունների զարգացմանը միտված ծրագրեր (Capacity Building Higher Education Projects), հնարավորություններ բուհերի, ՀԿ-ների, բիզնեսի ներկայացուցիչների համար

հարց ու պատասխան

Լանա ԿԱՌԼՈՎԱ, Էրազմուս+ ազգային գրասենյակի Համակարգող

14:40-15:00

Վիրտուալ փոխանակումներ (Virtual Exchanges)

Վարդ ՂՈՒԿԱՍՅԱՆ, Էրազմուս+ ազգային գրասենյակի Ծրագրի պատասխանատու

Սուրճի հյուրասիրություն

Էրազմուս+ տեղեկատվական օր Վանաձորում

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն, Շինարարների 12, ք. Վանաձոր

2021թ. դեկտեմբերի 3-ին տեղի կունենա **Էրազմուս+ ծրագրի Տեղեկատվական օր** Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում: Միջոցառման ընթացքում կներկայացվեն **Էրազմուս+ կրթաթոշակային հնարավորությունները ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և անհատների համար:**

Էրազմուս+ կրթաթոշակներով հետքերը ված անձանց հնարավորություն կընձեռվի ստանալու պատասխաններ հետևյալ հարցերին՝

- Ցանկանում եմ սովորել, դասավանդել կամ վերապատրաստվել Եվրոպայում, սակայն դրամական միջոցներ չունեմ: Ինչպե՞ս կարող է Էրազմուս+ ծրագիրն ինձ աջակցել:
- Ի՞նչպես դիմել Էրազմուս+ կրթաթոշակային ծրագրերին:
- Կարո՞ղ եմ մասնակցել Էրազմուս+ փոխանակման ծրագրերին, եթե իմ համալսարանը արտասահմանյան համալսարանի հետ համաձայնագիր չունի:
- Որպես ուսանող քանի՞ անգամ կարող եմ մասնակցել Էրազմուս+ փոխանակման ծրագրերին:
- Կարո՞ղ եմ ծրագրի ֆինանսավորմամբ մագիստրոսական կրթություն ստանալ արտերկրում:
- Որտե՞ղ փնտրեմ Էրազմուս Մունդուս համատեղ մագիստրոսական ծրագրերի շտեմարանը:
- Ի՞նչ պահանջներ կան օտար լեզվի իմացության հետ կապված:
- Ո՞րքան կրթաթոշակ կարող եմ ստանալ:
- Ո՞րոնք են Էրազմուս+ ծրագրի առավելությունները և այլն:



ՕՐԱԿԱՐԳ



10:00-10:40

Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրեր բուհերի ուսանողների և աշխատակիցների համար

Հարց ու պատասխան

10:40- 11:40

Էրազմուս Մունդուս համատեղ մագիստրոսական ծրագրեր

Հարց ու պատասխան

Վարդ ՂՈՒԿԱՍՅԱՆ, Էրազմուս+ ազգային գրասենյակի Ծրագրի պատասխանատու

Սուրճի հյուրասիրություն